ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE46-1A5C-41ED-99BC հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

# ՈՐՈՇՈՒՄ
## Միջնորդությունը բավարարելու մասին

ԵԴ2/1772/02/26 քաղ. Երևան
30 Մարտ 2026թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/1772/02/26 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու հարցը.

## ՊԱՐԶԵՑ

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչներ Տաթևիկ Սարգսյանի և Հեղինե Ոսկանյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ Ներքին գործերի նախարարության, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, հայցելով՝
- անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 13.01.2026 թվականին հայտարարված «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ և 6-րդ կետերը.
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը պարտավորեցնել «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը.
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը պարտավորեցնել ընդունել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշում, իսկ «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության հետ Մրցույթի արդյունքներով կնքված պայմանագիրն անվավեր ճանաչել, եթե առկա է կնքված պայմանագիր:
Դատարանը (դատավոր՝ Ա.Ճիլաջյան) 25.02.2026թ. կայացրել է որոշում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը 09.03.2026թ. հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան:
Դատարանը 16.03.2026 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը հայցադիմումը կրկին 17.03.2026թ.-ին ներկայացրել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը հայցել է՝
- անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 13.01.2026թ.-ին հայտարարված «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ և 6-րդ կետերը:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը պարտավորեցնել «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը:
Հայցվորը ներկայացրել է նաև միջնորդություն՝ գործով դատական նիստ հրավիրելու մասին:
Դատարանը 20.03.2026 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և դատական նիստ հրավիրելու մասին:
Հայցվոր կողմը 24.03.2026թ.-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ նախապես վճարված պետական տուրքը՝ որպես դատական ծախս, Պատասխանողից բռնագանձելու մասին:
Պատասխանող կողմը 26.03.2026թ.-ին հայցադիմումի պատասխան է ներկայացրել:
Պատասխանող կողմը 26.03.2026 թվականին միջնորդություն է ներկայացրել՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին (այսուհետ՝ նաև Միջնորդություն), համաձայն որի՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածը և «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը հայտնել է, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ՆԳՆ կարիքների համար ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների ձեռքբերման նպատակով:
ՀՀ ներքին գործերի նախարարությունը նշված մրցույթի շրջանակներում հաղթող ճանաչված ընկերության՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագիր:

ՀՀ վարչապետի 13.02.2026թ. թիվ 122-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոն գրասենյակի կանոնադրու-թյունը: Նշված որոշումն ուժի մեջ է մտել 2026 թվականի փետրվարի 15-ից:

Կանոնադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնը գրասենյակ է, որն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացնում է իրավախախտումների, արտակարգ իրավիճակների, պատահարների վերաբերյալ ստացված հեռախոսազանգերի, ինչպես նաև այլ միջոցներով կամ եղանակներով ստացվող տեղեկությունների (այսուհետ՝ ահազանգ) ընդունում և ահազանգերի կառավարում, Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակի շուրջօրյա վերահսկում, ճգնաժամային իրավիճակների կառավարում:

Ահազանգերի ընդունումը և կառավարումը պատշաճ իրականացնելու համար հայտա-րարվել է ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցույթ:

Հրավերով ներկայացված պայմանագրի օրինակելի ձևին կից գնման տեխնիկական բնութագրում սահմանվել է ծառայության ձեռքբերման նպատակը: Մասնավորապես, սույն տեխնիկական առաջադրանքը սահմանում է ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) օպերատիվ կառավարման կենտրոնի ավտոմատացված տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման (այսուհետ՝ Համակարգ) շարունակական սպասարկման, արդիականացման ծառայությունների մատուցման պահանջները: Փաստաթուղթը սահմանում է ծրագրային ապահովման տեխնիկական աջակցման ծառայություններին ներկայացվող ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները և նպատակ է հետապնդում ապահովել Համակարգի կայուն, անխափան, անվտանգ աշխատանքը և դրա զարգացումը՝ համաձայն Պատվիրատուի գործընթացների և ռազմավարական նպատակների:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ծրագրային ապահովումը նպատակ ունի՝ ապահովելու Համակարգի կայուն, անխափան, անվտանգ աշխատանքը, իսկ Համակարգի միջոցով ընդունվում և կառավարվում են իրավախախտումների, արտակարգ իրավիճակների ու պատահարների վերաբերյալ ահազանգերը՝ ապահովելով իրավասու ստորաբաժանումների պատշաճ արձագանքը, ինչն անմիջապես կապված է քաղաքացիների կյանքի ու առողջության, սեփականության բոլոր ձևերի պաշտպանության հետ:

Գնման գործընթացի կասեցման արդյունքում ՀՀ ներքին գործերի նախարարությունը, որը արդեն իսկ հաղթող ճանաչված ընկերության հետ կնքել է պայմանագիր, չի կարողանալու ապահովել համակարգի կայուն, անխափան աշխատանքը, որի արդյունքում խախտվելու են քաղաքացիների

իրավունքները:
Վարչական մարմինը պարտավոր է համապատասխան միջոցներով, սույն դեպքում՝ գնում հայտարարելու միջոցով, ապահովել Համակարգի անխափան աշխատանքը:
Ուստի, հանրային շահից ելնելով, միջնորդում եմ՝ վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ ապահովելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության ծառայողների արդյունավետ աշխատանքը՝ ի նպաստ հասարակության անվտանգության և հանրության իրավունքների պաշտպանության:
Ելնելով վերոգրյալից միջնորդել է վերացնել «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման գործընթացի՝ օրենքի ուժով կասեցումը
Դատարանը, քննության առնելով Միջնորդությունը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի համաձայն՝
1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
2. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: (...):
Սույն դրույթներից հետևում է, որ օրենքի ուժով գնման գործընթացի կասեցման վերացման համար անհրաժեշտ հիմքեր են հանդիսանում՝
- հանրային շահի առկայությունը.
- պաշտպանության շահի առկայությունը.
- ազգային անվտանգության շահի առկայությունը:
Հաշվի առնելով Պատասխանողի կողմից վկայակոչված փաստերը, Դատարանը հարկ է համարում անդրադառնալ միայն հանրային շահի առկայությանը՝ Միջնորդության բավարարման հարցի լուծման տեսանկյունից:
Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/2355/05/20 վարչական գործով 2023 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ անդրադառնալով «հանրային

շահ» հասկացությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «... իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:»:

Այն հանգամանքը, որ ցանկացած գնման գործընթացի հիմքում ընկած է հանրային շահը, բխում է «Գնումների մասին» օրենքի ամբողջ տրամաբանությունից՝ հիմք ընդունելով և հատուկ սուբյեկտային կազմը, մասնավորապես՝ որպես պատվիրատու են հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց մասնակցությամբ իրավաբանական անձինք, հանրային կազմակերպությունները, և օրենքով հետապնդվող նպատակները և սկզբունքները՝ ուղղված հանրային միջոցների առավելագույնս արդյունավետ և նպատակային տնօրինմանը:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ՔԴՕ 234.11-րդ հոդվածի 2-րդ մասում «հանրային շահ» եզրույթը ենթակա է գնահատման բացառիկության տեսանկյունից, որը դուրս է գալիս տվյալ գնմանը բնորոշ նպատակներից և ապահովում է որոշակի բացառիկ հանգամանքների առկայություն, հակառակ պարագայում՝ օրենքով վիճարկման արդյունքում գնման գործընթացի կասեցման պահանջը ինքնանպատակ է, քանի որ ինչպես արդեն նշվեց, ցանկացած գնման գործընթացի հիմքում առկա է որոշակի հանրային շահ:

Դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի միջնորդության փաստական հիմքերը հանգում են նրան, որ ահազանգերի ընդունումը և կառավարումը պատշաճ իրականացնելու համար հայտարարվել է ծրագրային ապահովման օժանդակ ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցույթ և ծրագրային ապահովումը նպատակ ունի՝ ապահովելու Համակարգի կայուն, անխափան, անվտանգ աշխատանքը, իսկ Համակարգի միջոցով ընդունվում և կառավարվում են իրավախախտումների, արտակարգ իրավիճակների ու պատահարների վերաբերյալ ահազանգերը՝ ապահովելով իրավասու ստորաբաժանումների պատշաճ արձագանքը, ինչն անմիջապես կապված է քաղաքացիների կյանքի ու առողջության, սեփականության բոլոր ձևերի

պաշտպանության հետ:
Դատարանն արձանագրում է, որ ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնը գրասենյակ է, որն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացնում է իրավախախտումների, արտակարգ իրավիճակների, պատահարների վերաբերյալ ստացված հեռախոսազանգերի, ինչպես նաև այլ միջոցներով կամ եղանակներով ստացվող տեղեկությունների ընդունում և ահազանգերի կառավարում, Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակի շուրջօրյա վերահսկում, ճգնաժամային իրավիճակների կառավարում, որը դուրս է գալիս նեղ անձնական շահերից և բնորոշում է ընդհանուր հանրային շահը, իրավական պետության սահմանադրական գաղափարի կենսագործումը:
Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-200 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/1772/02/26 քաղաքացիական գործով վերացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի ուժով թիվ «ՀՀ ՆԳՆ ԲՄԾՁԲ-2026/L-16» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2026.03.30 11:49:53 AMT

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*